*«ՎԱՎԵՐԱՑՆՈՒՄ ԵՄ»*
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ
*26 հոկտեմբերի 1999 թ.*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ու Մ

26 հոկտեմբերի 1999 թվականի N 662
քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՐՈՇ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱԿՑԻԶԱՅԻՆ ՆՈՐ ՆՄՈՒՇԻ ԴՐՈՇՄԱՆԻՇՆԵՐՈՎ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

***(Վերնագիրը փոփ. 30.10.08 N 1229-Ն)***

Հայաստանի Հանրապետությունում արտադրվող և Հայաստանի Հանրապետությունում ներմուծվող ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորման կարգը հստակեցնելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել՝

ա) Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ակցիզային նոր նմուշի դրոշմանիշերով պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների ցանկը (կցվում է).

Սույն կետում նշված ցանկի՝ 2208 ծածկագրին դասվող Հայաստանի Հանրապետություն ներմուծված մինչև 9 տոկոս սպիրտայնություն ունեցող սպիրտային խմիչքները ենթակա չեն պարտադիր դրոշմավորման.

բ)***(«բ» ենթակետն ուժը կորցրել է 30.10.08 N 1229-Ն)***

գ) ***(«գ» ենթակետն ուժը կորցրել է 30.10.08 N 1229-Ն)***

դ) Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների ակցիզային նոր նմուշի դրոշմանիշերով պարտադիր դրոշմավորման կարգը (կցվում է).

ե) ոգելից խմիչքներ արտադրողների և ներմուծողների մոտ առկա «1997», «1998» ու «1999» թվագրված նմուշի դրոշմանիշերով դրոշմավորված ոգելից խմիչքների փաստացի մնացորդների վերադրոշմավորման կարգը (կցվում է).

զ) արտադրողների և ներմուծողների մոտ առկա՝ «2000» թվագրված նմուշի ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված ապրանքների փաստացի մնացորդների վերադրոշմավորման կարգը (կցվում է):

է) արտադրողների և ներմուծողների մոտ առկա՝ «2001» թվագրված նմուշի ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված ապրանքների փաստացի մնացորդների վերադրոշմավորման կարգը՝ համաձայն հավելվածի.

ը) արտադրողների մոտ առկա՝ «2003» թվագրված ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված ոգելից խմիչքների և ներմուծողների մոտ առկա՝ «2002» թվագրված նմուշի ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված ապրանքների փաստացի մնացորդների վերադրոշմավորման կարգը՝ համաձայն հավելվածի.

թ) «ներմուծողների մոտ առկա «2003» թվագրված նմուշի ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված ապրանքների փաստացի մնացորդների վերադրոշմավորման կարգը՝ համաձայն հավելվածի.

ժ) արտադրողների մոտ առկա՝ «2004» թվագրված նմուշի ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված ալկոհոլային խմիչքների փաստացի մնացորդների վերադրոշմավորման կարգը՝ համաձայն հավելվածի.

ժ$^{1}$) ներմուծողների մոտ առկա «2004» թվագրված նմուշի ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված ապրանքների փաստացի մնացորդների վերադրոշմավորման կարգը՝ համաձայն հավելվածի.

ժ$^{2}$) ներմուծողների մոտ առկա՝ «2005» թվագրված նմուշի ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված ապրանքների փաստացի մնացորդների վերադրոշմավորման կարգը՝ համաձայն հավելվածի.

ժ$^{3}$) «ներմուծողների մոտ առկա «2006» թվագրված նմուշի ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված ապրանքների փաստացի մնացորդների վերադրոշմավորման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

ժ$^{4}$) «ներմուծողների մոտ առկա «2007» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված ապրանքների փաստացի մնացորդների վերադրոշմավորման կարգը՝ համաձայն հավելվածի.

***(1-ին կետը լրաց. 26.12.00 N 873, 24.10.01 N 1038, 19.12.02 N 2079-Ն, 08.04.04 N 540-Ն, 17.06.04 N 901-Ն, 04.08.05 N 1172-Ն, 11.05.06 N 620-Ն, 10.08.06 N 1118-Ն, 23.08.07 N 949-Ն, 16.10.08 N 1165-Ն, փոփ. 30.10.08 N 1229-Ն, լրաց. 29.04.10 N 522-Ն)***

2. Սահմանել, որ՝

ա) 2000 թվականի փետրվարի 1-ից Հայաստանի Հանրապետությունում արտադրվող և Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ոգելից խմիչքի, էթիլային սպիրտի և ծխախոտի արտադրանքի դրոշմավորման համար կիրառվելու են ակցիզային նոր նմուշի դրոշմանիշեր.

բ) ***(«բ» ենթակետն ուժը կորցրել է 30.10.08 N 1229-Ն)***

գ) 2000 թվականի մայիսի 1-ից արգելվում է Հայաստանի Հանրապետությունում արտադրված «1997», «1998» և «1999» թվագրված ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված ապրանքների իրացումը Հայաստանի Հանրապետությունում, բացառությամբ սույն կետի «ը» ենթակետում նշված դեպքի.

դ) 2000 թվականի նոյեմբերի 1-ից արգելվում է Հայաստանի Հանրապետություն ներմուծված՝ «1997», «1998» և

«1999» թվագրված ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված ծխախոտի արտադրանքի, իսկ 2000 թվականի օգոստոսի 1-ից պարտադիր դրոշմավորման ենթակա այլ ապրանքների իրացումը Հայաստանի Հանրապետությունում.

ե) *(«ե» ենթակետն ուժը կորցրել է 30.10.08 N 1229-Ն)*

զ) Հայաստանի Հանրապետությունում ներմուծվող դրոշմավորման ենթակա էթիլային սպիրտի և ոգելից խմիչքի արտադրանքի համար նախատեսված ակցիզային յուրաքանչյուր դրոշմանիշի համար վճարվում է 100 դրամ, ծխախոտի արտադրանքի համար՝ 25 դրամ.

է) քաղաքացիները (բացառությամբ՝ անհատ ձեռնարկատերերի) անձնական սպառման համար կարող են Հայաստանի Հանրապետություն ներմուծել սույն որոշմամբ սահմանված կարգով չդրոշմավորված՝ դրոշմավորման ենթակա ապրանքներ՝ Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսդրությամբ սահմանված չափով.

ը) Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարության կողմից անցկացված գույքագրման արդյունքներով արձանագրված Հայաստանի Հանրապետությունում արտադրողների մոտ առկա «1997», «1998» և «1999» թվագրված նմուշի դրոշմանիշերով դրոշմավորված ծխախոտի արտադրանքի Հայաստանի Հանրապետությունում իրացումն արգելվում է 2000 թվականի նոյեմբերի 1-ից:

թ) 2002 թվականի մայիսի 1-ից Հայաստանի Հանրապետությունում արգելվում են՝

- Հայաստանի Հանրապետությունում արտադրված՝ «2000» թվագրված ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված ապրանքների (բացառությամբ ծխախոտի արտադրանքի) իրացումը.
- Հայաստանի Հանրապետություն ներմուծված՝ «2000» թվագրված ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված ապրանքների (բացառությամբ ծխախոտի արտադրանքի) իրացումը.

ժ) 2002 թվականի օգոստոսի 1-ից արգելվում է Հայաստանի Հանրապետությունում արտադրված և Հայաստանի Հանրապետություն ներմուծված՝ «2000» թվագրված ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված ծխախոտի արտադրանքի (բացառությամբ «Salem», «More FF» և «More Menthol» անվանատեսակների) իրացումը: Հայաստանի Հանրապետություն ներմուծված «2000» թվագրված ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված «Salem» (17264 տուփ), «More FF» (77189 տուփ) և «More Menthol» (28551 տուփ) անվանատեսակների ծխախոտի արտադրանքի իրացումն արգելվում է 2003 թվականի հունվարի 1-ից.

ժա) 2003 թվականի ապրիլի 1-ից Հայաստանի Հանրապետությունում արգելվում են՝

Հայաստանի Հանրապետությունում արտադրված՝ «2001» թվագրված ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված ոգելից խմիչքների (բացառությամբ գինու արտադրանքի) իրացումը,

Հայաստանի Հանրապետություն ներմուծված՝ «2001» թվագրված ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված ապրանքների իրացումը:

Հայաստանի Հանրապետությունում արտադրված՝ «2001» թվագրված ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված ծխախոտի արտադրանքի իրացումն արգելվում է 2003 թվականի մարտի 1-ից.

ժա[1]) 2004 թվականի հուլիսի 15-ից Հայաստանի Հանրապետությունում արգելվում են՝

Հայաստանի Հանրապետությունում արտադրված՝ «2003» թվագրված ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված ապրանքների (բացառությամբ ծխախոտի արտադրանքի) իրացումը,

Հայաստանի Հանրապետություն ներմուծված՝ «2002» թվագրված ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված ապրանքների իրացումը.

ժա[2]) 2004 թվականի սեպտեմբերի 15-ից Հայաստանի Հանրապետությունում արգելվում է Հայաստանի Հանրապետությունում արտադրված՝ «2003» թվագրված ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված ծխախոտի արտադրանքի իրացումը

ժա[3]) 2005 թվականի հոկտեմբերի 1-ից Հայաստանի Հանրապետությունում արգելվում է Հայաստանի Հանրապետություն ներմուծված՝ «2003» թվագրված ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված ապրանքների իրացումը.

ժա[4]) 2006 թվականի հուլիսի 1-ից Հայաստանի Հանրապետությունում արգելվում է Հայաստանի Հանրապետությունում արտադրված «2004» թվագրված ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված ալկոհոլային խմիչքների իրացումը.

ժա[5]) 2006 թվականի հոկտեմբերի 1-ից Հայաստանի Հանրապետությունում արգելվում է Հայաստանի Հանրապետություն ներմուծված՝ «2004» թվագրված ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված ապրանքների իրացումը.

ժա[6]) 2007 թվականի հոկտեմբերի 1-ից Հայաստանի Հանրապետությունում արգելվում է Հայաստանի Հանրապետություն ներմուծված՝ «2005» թվագրված ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված ապրանքների իրացումը.

ժա[7]) 2008 թվականի նոյեմբերի 25-ից Հայաստանի Հանրապետությունում արգելվում է Հայաստանի Հանրապետություն ներմուծված՝ «2006» թվագրված ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված ապրանքների իրացումը.

ժա[8]) 2010 թվականի հուլիսի 1-ից Հայաստանի Հանրապետությունում արգելվում է Հայաստանի Հանրապետություն ներմուծված՝ «2007» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված ապրանքների իրացումը.

ժբ) սույն որոշմամբ սահմանված իրացման թույլատրելի ժամկետներից հետո հին նմուշի (գործածությունից հանված) դրոշմանիշերով դրոշմավորված ապրանքների իրացումն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն:

2003 թվականի հունվարի 1-ից հետո Հայաստանի Հանրապետություն ներմուծվող և Հայաստանի Հանրապետությունում արտադրվող՝ անթափանց թաղանթներով ամբողջովին կամ մասնակիորեն ծածկված (դրոշմանիշի սերիան, համարը և այլ պաշտպանիչ տարրեր պարունակող մասերը) դրոշմանիշերով դրոշմավորված կամ նույնականացնող նշումներով նշագրված (հաստատված նմուշով չնախատեսված նույնականացնող նշումներ ունեցող) դրոշմանիշերով դրոշմավորված ապրանքների իրացումը դիտվում է որպես չդրոշմավորված ապրանքների իրացում:

Սույն ենթակետում նշված ապրանքները ենթակա են ոչնչացման՝ չդրոշմավորված ապրանքների ոչնչացման կարգին համապատասխան:

Սույն կետի «ե» և «զ» ենթակետերին համապատասխան ակցիզային դրոշմանիշերի համար վճարված

գումարներն ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքներ արտադրող կամ ներմուծող անձանց համար համարվում են ակցիզային հարկի կանխավճար, իսկ ակցիզային հարկին փոխարինող հաստատագրված վճարով հարկման ենթակա ապրանքներ արտադրող կամ ներմուծող անձանց համար՝ հաստատագրված վճարից պակասեցման ենթակա գումար:

Հայաստանի Հանրապետությունում արտադրված «2001» թվագրված ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված գինու արտադրանքի իրացումն արգելվում է 2003 թվականի հուլիսի 1-ից:

*(2-րդ կետը լրաց., փոփ. 12.04.00 N 169, լրաց. 20.05.00 N 253, խմբ., փոփ. 12.08.00 N 470, լրաց. 24.10.01 N 1038, 05.06 02 N 683, 24.10.02 N 1711-Ն, 19.12.02 N 2079-Ն, փոփ. 23.01.03 N 47-Ն, լրաց. 03.04.03 N 396-Ն, փոփ., լրաց. 08.04.04 N 540-Ն, լրաց. 17.06.04 N 901-Ն, 04.08.05 N 1172-Ն, 11.05.06 N 620-Ն, 10.08.06 N 1118-Ն, 23.08.07 N 949-Ն, 16.10.08 N 1165-Ն, փոփ. 30.10.08 N 1229-Ն, լրաց. 29.04.10 N 522-Ն)*

3. *(3-րդ կետն ուժը կորցրել է 30.10.08 N 1229-Ն)*

4. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բռնագրավված, հօգուտ պետության տիրազուրկ ճանաչված և ժառանգության իրավունքով պետությանն անցած սույն որոշմանը համապատասխան չդրոշմավորված՝ ներմուծված ապրանքների իրացումը կատարվում է ակցիզային դրոշմանիշերով: Այդ ապրանքների սույն որոշմանը համապատասխան դրոշմավորման համար պատասխանատու է համապատասխան պետական լիազորված մարմինը: Վերջինիս ակցիզային դրոշմանիշերը տրամադրվում են անհատույց: Սույն կետով նախատեսված ապրանքների դրոշմավորման կարգը սահմանում է մաքսային մարմինը:

*(4-րդ կետը լրաց. 25.08.01 N 770, փոփ. 30.10.08 N 1229-Ն)*

5. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարությանը՝

ա) մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել առաջարկություններ ակցիզային նոր նմուշի դրոշմանիշերի հաստատման, պատվիրման, տպագրման և ստացման աշխատանքների ֆինանսավորումն ապահովելու վերաբերյալ.

բ) մինչև 1999 թվականի դեկտեմբերի 31-ը ապահովել ակցիզային նոր նմուշի դրոշմանիշերի հաստատման, պատվիրման, տպագրման և ստացման աշխատանքները.

գ) *(«գ» ենթակետն ուժը կորցրել է 30.10.08 N 1229-Ն)*

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարության հետ կնքված պայմանագրով նախատեսված ակցիզային դրոշմանիշերը պատվիրում է Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարությունը: Այդ ակցիզային դրոշմանիշերի տպագրության, առաքման ֆինանսավորումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարության հետ պայմանագիր կնքած անձանց միջոցների հաշվին:

*(5-րդ կետը փոփ. 28.09.00 N 600, խմբ. 24.10.01 N 1038, փոփ. 30.10.08 N 1229-Ն)*

5[1]. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի նախագահին՝

ա) յուրաքանչյուր տարվա համար անհրաժեշտության դեպքում հաստատել ակցիզային դրոշմանիշերի նմուշները, այդ թվում՝ դրոշմավորման ենթակա ապրանքներ ներմուծող անձանց և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի միջև կնքված պայմանագրով նախատեսված ակցիզային դրոշմանիշերի նմուշները:

Ակցիզային դրոշմանիշերը պատվիրում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեն: Հաստատված ակցիզային դրոշմանիշերի նմուշներից տարբերվող և լրացուցիչ պաշտպանիչ շերտեր պարունակող ակցիզային դրոշմանիշերի տպագրության հետ կապված ծախսերը ֆինանսավորվում են Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի հետ պայմանագիր կնքած անձանց միջոցների հաշվին.

բ) մաքսային ընթացակարգերի և մաքսային կանոնների խախտման, ինչպես նաև սույն որոշմամբ նախատեսված այլ դեպքերում, որպես դրոշմանիշի արժեք, հիմք է ընդունվում ակցիզային դրոշմանիշերի տպագրության ծախսերի հիման վրա Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի հաստատած ակցիզային դրոշմանիշերի արժեքը (գինը):

*(5[1] կետը լրաց. 19.12.02 N 2079-Ն)*

6. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարությանը՝

ա)*(«ա» ենթակետն ուժը կորցրել է 30.10.08 N 1229-Ն)*

բ)*(«բ» ենթակետն ուժը կորցրել է 30.10.08 N 1229-Ն)*

գ) մեկամսյա ժամկետում հաստատել Հայաստանի Հանրապետությունում արտադրվող և Հայաստանի Հանրապետություն ներմուծվող դրոշմավորման ենթակա ապրանքների համար նախատեսված «1997», «1998», «1999» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշերի մնացորդների դուրսգրման և ոչնչացման, ինչպես նաև 2000 թվականի փետրվարի 1-ի դրությամբ ստացված, չօգտագործված կամ վնասված ակցիզային դրոշմանիշերի վերադարձման կարգը՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ.

դ)*(«դ» ենթակետն ուժը կորցրել է 30.10.08 N 1229-Ն)*

ե) ապահովել վերահսկողություն սույն որոշման 2-րդ կետի «ը» ենթակետում նշված ապրանքների իրացման նկատմամբ՝ յուրաքանչյուր 15 օրվա ընթացքում իրացված ապրանքի քանակի (ըստ անվանացանկի), գնորդ կազմակերպությունների (կազմակերպության անվանումը, հասցեն, բանկային տվյալները, հարկ վճարողի հաշվառման համարը, ձեռնարկությունների պետական ռեգիստրում գրանցման համարը) վերաբերյալ՝ «Գրանդ-Տոբակո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարություն ներկայացվող տեղեկությունների հիման վրա.

զ) մինչև 2002 թվականի ապրիլի 1-ը հաստատել «2000» թվագրված ակցիզային դրոշմանիշերի չօգտագործված և վնասված քանակությունների դուրսգրման ու ոչնչացման կարգը և ապահովել այդ աշխատանքների կատարումը:

է) մինչև 2003 թվականի փետրվարի 1-ը հաստատել «2001» թվագրված՝ չօգտագործված և վնասված քանակություններով ակցիզային դրոշմանիշերի դուրսգրման ու ոչնչացման կարգը և ապահովել այդ աշխատանքների կատարումը:

ը) մինչև 2004 թվականի սեպտեմբերի 15-ը հաստատել «2003» թվագրված տեղական արտադրանքի դրոշմավորման համար նախատեսված՝ չօգտագործված և վնասված ակցիզային դրոշմանիշերի դուրսգրման ու ոչնչացման կարգը և ապահովել այդ աշխատանքների կատարումը:

թ) մինչև 2006 թվականի հուլիսի 1-ը հաստատել «2004» թվագրված չօգտագործված և վնասված ալկոհոլային

խմիչքների ակցիզային դրոշմանիշերի դուրսգրման և ոչնչացման կարգը և ապահովել այդ աշխատանքների կատարումը:

*(6-րդ կետը լրաց. 20.05.00 N 253, 24.10.01 N 1038, 19.12.02 N 2079-Ն, փոփ. 08.04.04 N 540-Ն, լրաց. 17.06.04 N 901-Ն, 11.05.06 N 620-Ն, փոփ. 30.10.08 N 1229-Ն)*

6$^{1}$. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի նախագահին՝

ա) մինչև 2004 թվականի հունիսի 15-ը հաստատել «2002» թվագրված չօգտագործված և վնասված ակցիզային դրոշմանիշերի դուրսգրման ու ոչնչացման կարգը և ապահովել այդ աշխատանքների կատարումը.

բ) մեկամսյա ժակետում հաստատել Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների ակցիզային դրոշմանիշերի ստացման, պահպանման, հաշվառման, տրամադրման և դրանց նկատմամբ հսկողության իրականացման կարգը՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հետ.

գ) մինչև 2005 թվականի սեպտեմբերի 1-ը հաստատել «2003» թվագրված չօգտագործված և վնասված ակցիզային դրոշմանիշերի դուրսգրման ու ոչնչացման կարգը և ապահովել այդ աշխատանքների կատարումը.

դ) մինչև 2006 թվականի սեպտեմբերի 1-ը հաստատել «2004» թվագրված չօգտագործված և վնասված ակցիզային դրոշմանիշերի դուրսգրման ու ոչնչացման կարգը և ապահովել այդ աշխատանքների կատարումը.

ե) մինչև 2007 թվականի սեպտեմբերի 1-ը հաստատել «2005» թվագրված՝ չօգտագործված և վնասված ակցիզային դրոշմանիշերի դուրսգրման ու ոչնչացման կարգը և ապահովել այդ աշխատանքների կատարումը:

*(6$^{1}$ կետը լրաց. 08.04.04 N 540-Ն, 04.08.05 N 1172-Ն, 10.08.06 N 1118-Ն, 23.08.07 N 949-Ն)*

6$^{2}$. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահին՝ մինչև 2008 թվականի նոյեմբերի 25-ը հաստատել «2006» թվագրված չօգտագործված և վնասված ակցիզային դրոշմանիշերի դուրսգրման ու ոչնչացման կարգը:

*(6$^{2}$ կետը լրաց. 16.10.08 N 1165-Ն)*

6$^{3}$ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահին՝ մինչև 2010 թվականի հունիսի 1-ը հաստատել «2007» թվագրմամբ «չօգտագործված և վնասված ակցիզային դրոշմանիշերի դուրսգրման ու ոչնչացման կարգը» և ապահովել այդ աշխատանքների կատարումը:

*(6$^{3}$ -րդ կետը լրաց. 29.04.10 N 522-Ն)*

7. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի հունիսի 10-ի «Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների դրոշմավորման մասին» N 175, 1997 թվականի հունիսի 12-ի «Հայաստանի Հանրապետությունում արտադրվող ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների դրոշմավորման մասին» N 178, 1997 թվականի հուլիսի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի հունիսի 10-ի N 175 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 247, 1997 թվականի հուլիսի 31-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի հունիսի 10-ի N 175 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 316, 1997 թվականի օգոստոսի 19-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի հունիսի 12-ի N 178 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 346, 1997 թվականի սեպտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի հունիսի 10 N 175 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 416, 1998 թվականի հունվարի 7-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի հունիսի 10-ի N 175 և հունիսի 12-ի N 178 որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» N 5, 1998 թվականի մարտի 17-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի հունիսի 10-ի N 175 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 180, 1998 թվականի մարտի 31-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի հունիսի 10-ի N 175 և հունիսի 12-ի N 178 որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 215, 1998 թվականի օգոստոսի 13-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի հունիսի 10-ի N 175 և հունիսի 12-ի N 178 որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» N 508, 1998 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի հունիսի 10-ի N 175 և 1997 թվականի հունիսի 12-ի N 178 որոշումներում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» N 539, 1998 թվականի հոկտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի հունիսի 10-ի N 175 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 648, 1999 թվականի ապրիլի 22-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի հունիսի 10-ի N 175 և 1997 թվականի հունիսի 12-ի N 178 որոշումներում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» N 253 որոշումները:

8. Սույն որոշման 1-ին կետի «գ» ենթակետով հաստատված կարգին վերաբերող գերատեսչական նորմատիվ ակտերը սահմանված կարգով հաստատում է Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարությունը՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության հետ, իսկ նույն կետի «դ» ենթակետով հաստատված կարգին վերաբերող գերատեսչական նորմատիվ ակտերը սահմանված կարգով հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեն՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության հետ:

*(8-րդ կետը խմբ. 25.08.01 N 770)*

9. Սույն որոշման 1-ին, 2, 3, 4, 7 և 8-րդ կետերն ուժի մեջ են մտնում 2000 թվականի փետրվարի 1-ից, իսկ 5-րդ և 6-րդ կետերը՝ 1999 թվականի հոկտեմբերի 26-ից:

**Հայաստանի Հանրապետության**
**վարչապետ** **Վ. Սարգսյան**

*Հաստատված է*
*ՀՀ կառավարության 1999 թվականի*
*հոկտեմբերի 26-ի N 662 որոշմամբ*

Ց Ա Ն Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐՏԱԴՐՎՈՂ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԱԿՑԻԶԱՅԻՆ ՆՈՐ ՆՄՈՒՇԻ ԴՐՈՇՄԱՆԻՇԵՐՈՎ ՊԱՐՏԱԴԻՐ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ

| Արտադրանքի ծածկագիրը՝ ըստ ԱՏԳ ապրանքային անվանացանկի | Ապրանքախմբի անվանումը |
|---|---|
| 2204, 2205, 2206 | խաղողի և այլ գինիներ |
| 2207 | էթիլային սպիրտ |
| 2208 | սպիրտային խմիչք |
| 2402 | ծխախոտի արտադրանք |

*Հաստատված է*
*ՀՀ կառավարության 1999 թվականի*
*հոկտեմբերի 26-ի N 662 որոշմամբ*

Ց Ա Ն Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐՏԱԴՐՎՈՂ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔԻ ՈՒ ԷԹԻԼԱՅԻՆ ՍՊԻՐՏԻ (ՆԵՐԱՌՅԱԼ ՇՇԱԼՑՈՒՄԸ) ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐՏԱԴՐՎՈՂ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌԵՎՏՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՉԱՓԵՐՈՎ ՏԱՐԱՆԵՐԻ (ՏՈՒՓԵՐԻ)

***(Ցանկն ուժը կորցրել է 30.10.08 N 1229-Ն)***

*Հաստատված է*
*ՀՀ կառավարության 1999 թվականի*
*հոկտեմբերի 26-ի N 662 որոշմամբ*

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐՏԱԴՐՎՈՂ ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՐՈՇ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱԿՑԻԶԱՅԻՆ ՆՈՐ ՆՄՈՒՇԻ ԴՐՈՇՄԱՆԻՇԵՐՈՎ ՊԱՐՏԱԴԻՐ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ
***(ԿԱՐԳՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԵԼ Է 30.10.08 N 1229-Ն)***

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետությունում
արտադրվող ակցիզային հարկով հարկման
ենթակա որոշ ապրանքների ակցիզային
նոր նմուշի դրոշմանիշերով պարտադիր
դրոշմավորման կարգի

Ց Ա Ն Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐՏԱԴՐՎՈՂ ՊԱՐՏԱԴԻՐ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ

| Ապրանքի ծածկագիրը՝ ըստ ԱՏԳ ապրանքային անվանացանկի | Ապրանքախմբի անվանումը |
|---|---|
| 2204, 2205, 2206 | խաղողի և այլ գինիներ, գինենյութ |
| 2207 | 0,5 լ տարողությամբ էթիլային սպիրտ |
| 2208 | սպիրտային խմիչք |
| 2402 | ծխախոտի արտադրանք |

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետությունում
արտադրվող ակցիզային հարկով հարկման
ենթակա որոշ ապրանքների ակցիզային
նոր նմուշի դրոշմանիշերով պարտադիր
դրոշմավորման կարգի

Ց Ա Ն Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐՏԱԴՐՎՈՂ ՊԱՐՏԱԴԻՐ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔԻ, ԷԹԻԼԱՅԻՆ ՍՊԻՐՏԻ (ՆԵՐԱՌՅԱԼ ՇՇԱԼՑՈՒՄԸ) ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐՏԱԴՐՎՈՂ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌԵՎՏՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՉԱՓԵՐՈՎ ՏԱՐԱՆԵՐԻ (ՏՈՒՓԵՐԻ)

| NN ը/կ | Ապրանքախմբի անվանումը | Տարայի թույլատրելի չափը (տուփում գլանակների թիվը) (հատ) |
|---|---|---|
| 1. | Ոգելից խմիչք | 0,25լ 0,33լ, 0,5լ, 0,7լ, 0,75լ, 0,8լ, 1,0լ |
| 2. | էթիլային սպիրտ | 0,5լ |
| 3. | Ծխախոտի արտադրանք այդ թվում՝ | |
| | սիգարետներ՝ ֆիլտրով | 10, 20 |
| | սիգարետներ՝ առանց ֆիլտրի | 12, 20 |

Հավելված N 3
Հայաստանի Հանրապետությունում
արտադրվող ակցիզային հարկով հարկման
ենթակա որոշ ապրանքների ակցիզային
նոր նմուշի դրոշմանիշերով պարտադիր
դրոշմավորման կարգի

ՀՀ ՊԵՆ ________________________________________ տարածքային հարկային
(տարածքային հարկային տեսչության անվանումը)

տեսչության պետին

Գրանցման N _________

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

__________________________________________________
(կազմակերպության լրիվ անվանումը, հասցեն)

__________________________________________________
(բանկային տվյալները, ՀՎՀՀ, պետական ռեգիստրում գրանցման համարը)

Հայտնում ենք որ, __________________________________________
(օտարերկրյա պետության զնորդ կազմակերպության անվանումը, բանկային տվյալները)
_____ __________ թ. ստացել ենք ______________________________
(օտարերկրյա պետության անվանումը)

կողմից սահմանված ակցիզային դրոշմանիշեր՝ ընդհանուր թվով ___________

__________________________________________________
(տառերով)
__________________________________________ դրոշմավորման համար:
(արտադրանքի անվանումը)

Ստացված դրոշմանիշերից՝

օգտագործվել են ____________________________________________
(թիվը տառերով)
վերադարձվել են ____________________________________________
(թիվը տառերով)
մնացորդը կազմում է __________________________________________
(թիվը տառերով)

Կազմակերպության տնօրեն __________________ __________________
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Գլխավոր հաշվապահ __________________ __________________
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Կ. Տ. _____ ___________ թ.

Հավելված N 4
Հայաստանի Հանրապետությունում
արտադրվող ակցիզային հարկով հարկման
ենթակա որոշ ապրանքների ակցիզային
նոր նմուշի դրոշմանիշերով պարտադիր
դրոշմավորման կարգի

ՀՀ ՊԵՆ ________________________________________ տարածքային հարկային
(տարածքային հարկային տեսչության անվանումը)
տեսչության պետին

Գրանցման N _________

# Դ Ի Մ ՈՒ Մ

## ԱԿՑԻԶԱՅԻՆ ԴՐՈՇՄԱՆԻՇԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

_______________________________________________
(կազմակերպության լրիվ անվանումը, հասցեն)

__________________________________________________
(բանկային տվյալները, ՀՎՀՀ, պետական ռեգիստրում գրանցման համարը)

խնդրում է տրամադրել ակցիզային դրոշմանիշեր՝ ընդհանուր թվով _________

_____________գումարի չափով (___________________________):
(գումարը տառերով)

Տվյալ ակցիզային դրոշմանիշերն անհրաժեշտ են՝ ______________________

1.__________________________________________________
(ապրանքի անվանումը, տարային չափը, թիվը)
2.__________________________________________________
(ապրանքի անվանումը, տարային չափը, թիվը)
3.__________________________________________________
(ապրանքի անվանումը, տարային չափը, թիվը)
4.__________________________________________________
(ապրանքի անվանումը, տարային չափը, թիվը)

Կազմակերպության կողմից ակցիզային դրոշմանիշերի համար գումարը մուտքագրվել է __________ հաշվին ________վճարային փաստաթղթով ___________ թ.
և վճարման գումարը կազմում է __________________________________
_________:
(տառերով)

Ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների դրոշմավորման կարգին ծանոթ ենք:

Կազմակերպության տնօրեն ___________________ (ստորագրությունը) ___________________ (անունը, ազգանունը)

Գլխավոր հաշվապահ ___________________ (ստորագրությունը) ___________________ (անունը, ազգանունը)

Կ. Տ. ______ ___________ թ.

Հավելված N 5
Հայաստանի Հանրապետությունում
արտադրվող ակցիզային հարկով հարկման
ենթակա որոշ ապրանքների ակցիզային
նոր նմուշի դրոշմանիշերով պարտադիր
դրոշմավորման կարգի

ՀՀ ՊԵՆ _______________________________________ տարածքային հարկային
(տարածքային հարկային տեսչության անվանումը)
տեսչություն

# Ա Ն Դ Ո Ր Ր Ա Գ Ի Ր

## ԱԿՑԻԶԱՅԻՆ ԴՐՈՇՄԱՆԻՇԵՐԻ ՍՏԱՑՄԱՆ

**Գրանցման N __________ ____ ___________ թ.**

_________________________________________________________
(կազմակերպության լրիվ անվանումը, հասցեն)
_________________________________________________________
(բանկային տվյալները, ՀՎՀՀ, պետական ռեգիստրում գրանցման համարը)
Ակցիզային դրոշմանիշեր՝
_______________________ հատ՝ ____________________ գումարի չափով:
(տառերով)
Ընդհանուր գումարը՝ __________________________________________
(տառերով)

Ակցիզային դրոշմանիշեր բաց թողնող աշխատող _________________________
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Ստացավ ___________________________________________________

(պաշտոնը, անունը ազգանունը)

1.________________________________________________________________

(դրոշմանիշի տեսակը, սերիան, թիվը)

2.________________________________________________________________

(դրոշմանիշի տեսակը, սերիան, թիվը)

3.________________________________________________________________

(դրոշմանիշի տեսակը, սերիան, թիվը)

4.________________________________________________________________

(դրոշմանիշի տեսակը, սերիան, թիվը)

N _______________ լիազորագրով ________________________________ թ.
Անձնագիր _______________ N _______________ տրված ______________
Ստացա _____ _____________ թ. ________________________________

(ստորագրությունը)

ՀՀ ՊԵՆ ՏՀՏ Ստացող կազմակերպություն
Կ.Տ.

**Հավելված N 6**
**Հայաստանի Հանրապետությունում**
**արտադրվող ակցիզային հարկով հարկման**
**ենթակա որոշ ապրանքների ակցիզային**
**նոր նմուշի դրոշմանիշերով պարտադիր**
**դրոշմավորման կարգի**

## ԱԿՑԻԶԱՅԻՆ ԴՐՈՇՄԱՆԻՇԵՐԻ ՓԱԿՑՄԱՆ ՁԵՎԸ




Ցելոֆանապատված ծխախոտի տուփերի համար ակցիզային դրոշմանիշը փակցվում է անմիջապես ծխախոտի տուփի վրա (ցելոֆանի տակ):

*(Հավելվածը խմբ. 11.12.03 N 1632-Ն)*

*Հաստատված է*
*ՀՀ կառավարության 1999 թվականի*
*հոկտեմբերի 26-ի N 662 որոշմամբ*

## Կ Ա Ր Գ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՐՈՇ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱԿՑԻԶԱՅԻՆ ՆՈՐ ՆՄՈՒՇԻ ԴՐՈՇՄԱՆԻՇԵՐՈՎ ՊԱՐՏԱԴԻՐ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ

*(Վերնագիրը խմբ. 14.04.05 N 582-Ն)*

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կանոնակարգվում է Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների (այսուհետ` դրոշմավորման ենթակա ապրանքներ) ակցիզային նոր նմուշի դրոշմանիշերով պարտադիր դրոշմավորման կարգը:
*(1-ին կետը խմբ. 14.04.05 N 582-Ն)*
2. Հայաստանի Հանրապետություն ներմուծվող դրոշմավորման ենթակա ապրանքների ցանկը նշված է սույն կարգի N 1 հավելվածում:
*(2-րդ կետը խմբ. 14.04.05 N 582-Ն)*
3. Հայաստանի Հանրապետություն ներմուծվող դրոշմավորման ենթակա ապրանքների դրոշմավորումը պարտադիր պայման է մաքսային մարմինների կողմից նշված ապրանքները «Ներմուծում` ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով բաց թողնելու համար` բացառությամբ սույն որոշմամբ նախատեսված դեպքերի:
*(3-րդ կետը խմբ. 14.04.05 N 582-Ն)*
4. Արգելվում է ներմուծողի կողմից սույն կարգին համապատասխան ձեռք բերված ակցիզային դրոշմանիշերի օտարումը կամ փոխանցումը (տրամադրումը, հատկացումը) այլ անձանց` բացառությամբ «Ժամանակավոր արտահանում» մաքսային ռեժիմով արտահանված ակցիզային դրոշմանիշերն օտարերկրյա պայմանադիր կողմին փոխանցելը:
*(4-րդ կետը խմբ. 14.04.05 N 582-Ն)*
5. Հայաստանի Հանրապետություն ներմուծվող դրոշմավորման ենթակա ապրանքների` սույն կարգին համապատասխան դրոշմավորման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատու է այդ ապրանքները ներմուծողը (հայտարարատուն):
*(5-րդ կետը խմբ. 14.04.05 N 582-Ն)*

## II. ԱԿՑԻԶԱՅԻՆ ԴՐՈՇՄԱՆԻՇԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄԸ

6. Հայաստանի Հանրապետություն դրոշմավորման ենթակա ապրանքներ ներմուծող անձինք (հայտարարատուները) ակցիզային դրոշմանիշերը ձեռք են բերում վերադաս մաքսային մարմնից, նախքան նշված ապրանքները Հայաստանի Հանրապետության մաքսային տարածք ներմուծելը` բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի հոկտեմբերի 26-ի N 662 որոշման 4-րդ կետով նախատեսված և (կամ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վերադրոշմավորման դեպքերի:
*(6-րդ կետը խմբ. 14.04.05 N 582-Ն)*
7. Արգելվում է Հայաստանի Հանրապետությունում որպես ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող սահմանված կարգով չգրանցված անձանց (այդ թվում` օտարերկրյա) ակցիզային դրոշմանիշերի տրամադրումը` բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի հոկտեմբերի 26-ի N 662 որոշման 4-րդ կետով նախատեսված դեպքերի:
*(7-րդ կետը խմբ. 14.04.05 N 582-Ն)*
8. Ներմուծողը Հայաստանի Հանրապետություն ներմուծվող դրոշմավորման ենթակա ապրանքների ակցիզային դրոշմանիշեր ձեռք բերելու համար վերադաս մաքսային մարմին է ներկայացնում`
ա) դիմում` ակցիզային դրոշմանիշեր ձեռք բերելու համար, ոգելից խմիչքների համար` համաձայն սույն կարգի N 2 հավելվածի, ծխախոտի արտադրանքի համար` համաձայն սույն կարգի N 2-1 հավելվածի.
*(«ա» ենթակետը փոփ. 25.09.08 N 1073-Ն)*
բ) օտարերկրյա պայմանադիր կողմի հետ կնքված պայմանագրի պատճենը (առկայության դեպքում` հավելվածներով և աղյուսակներով), իսկ պայմանագիրն օտար լեզվով կազմված լինելու դեպքում (հավելվածներով և աղյուսակներով)` նոտարական վավերացմամբ դրանց հայերեն թարգմանության պատճենը, որի հիման վրա կատարվելու է պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների ձեռքբերումը և հետագա ներմուծումը: Պայմանագրում նշվում է ներմուծման ենթակա ապրանքի անվանումը, տեսակը, տարան (փաթեթավորումը), քանակը, գինը, իսկ ալկոհոլային խմիչքների համար` նաև սպիրտայնության տոկոսը.
*(«բ» ենթակետը լրաց., փոփ. 25.09.08 N 1073-Ն)*
գ) հաշվետվություն դիմումը ներկայացնելու օրվա դրությամբ սույն կարգի 13-րդ կետին համապատասխան տրամադրված ակցիզային դրոշմանիշերի օգտագործման մասին (NN 3 և 3-1 հավելվածներ), եթե նախկինում ներմուծողի կողմից ստացվել են ակցիզային դրոշմանիշեր:
*(8-րդ կետը խմբ. 14.04.05 N 582-Ն)*
9. *(9-րդ կետն ուժը կորցրել է 25.09.08 N 1073-Ն)*
10. Հայաստանի Հանրապետություն ներմուծվող դրոշմավորման ենթակա էթիլային սպիրտի և ալկոհոլային խմիչքի արտադրանքի համար նախատեսված ակցիզային յուրաքանչյուր դրոշմանիշի ձեռքբերման համար վճարվում է 100 դրամ, ծխախոտի արտադրանքի համար` 25 դրամ` բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի հոկտեմբերի 26-ի N 662 որոշման 4-րդ կետով նախատեսված դեպքերի:
*(10-րդ կետը փոփ. 25.08.01 N 770, խմբ. 14.04.05 N 582-Ն)*
11. *(11-րդ կետն ուժը կորցրել է 25.09.08 N 1073-Ն)*
12. Վերադաս մաքսային մարմնի համապատասխան ստորաբաժանման պատասխանատու անձն ակցիզային դրոշմանիշերի ձեռքբերման համար գումարի վճարման իսկությունն ստուգելուց հետո դիմումի և դրա պատճենի վրա կատարում է «Գումարը վճարվել է» նշումը և հաստատում համապատասխան կնիքով:
Ակցիզային դրոշմանիշեր ձեռք բերելու համար դիմումի պատճենը տրվում է ներմուծողին, դիմումը և վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը մնում է վերադաս մաքսային մարմնում` սույն կարգի 8-րդ կետում նշված փաստաթղթերի հետ միասին:
*(12-րդ կետը փոփ. 08.04.04 N 540-Ն, խմբ. 14.04.05 N 582-Ն, փոփ., լրաց. 25.09.08 N 1073-Ն)*
13. *(13-րդ կետն ուժը կորցրել է 25.09.08 N 1073-Ն)*
14. «Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ակցիզային

դրոշմանիշերի տրամադրման ժամկետը երկարաձգելու մասին վերադաս մաքսային մարմինը տեղեկացնում է դիմողին և մաքսային ձևակերպում իրականացնող մաքսային մարմնին: Ներմուծողը դրոշմանիշերն ստանալու 90 օրվան հաջորդող կամ «Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 11-րդ կետի երկրորդ պարբերությամբ սահմանված կարգով դրոշմանիշերի տրամադրման ժամկետի երկարացման դեպքում այդ ժամկետներին հաջորդող 10-օրյա ժամկետում վերադաս մաքսային մարմին է ներկայացնում հաշվետվություն (NN 3 և 3-1 հավելվածներ) դրոշմանիշերի օգտագործման մասին:

*(14-րդ կետը խմբ. 14.04.05 N 582-Ն, լրաց., փոփ. 25.09.08 N 1073-Ն)*

15. Ակցիզային դրոշմանիշերն ստանալուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում դրանք ենթակա են հայտարարագրման՝ «ժամանակավոր արտահանում» մաքսային ռեժիմով կամ հանձնման՝ մաքսային մարմինների պատասխանատու պահպանությանը՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի հոկտեմբերի 26-ի N 662 որոշման 4-րդ կետով նախատեսված դեպքերի:

*(15-րդ կետը խմբ. 14.04.05 N 582-Ն)*

16. Վերադաս մաքսային մարմինը ներմուծողին ակցիզային դրոշմանիշեր կարող է տրամադրել պայմանագրով՝ յուրաքանչյուր ապրանքատեսակի համար նախատեսված թվի առավելագույնը՝ 110 տոկոսի չափով:

*(16-րդ կետը փոփ. 25.08.01 N 770, 08.04.04 N 540-Ն, խմբ. 14.04.05 N 582-Ն)*

17. Ակցիզային դրոշմանիշերը տրամադրվում են ներմուծողի լիազորված անձին՝ լիազորագիրը և անձնագիրը ներկայացնելու դեպքում: Ակցիզային դրոշմանիշերը տրամադրվում են համապատասխան հաշիվ-ապրանքագրով (N 4 հավելված), որը ներմուծողի կողմից մաքսային ձևակերպումն իրականացնող մաքսային մարմին է ներկայացվում ակցիզային դրոշմանիշերը «ժամանակավոր արտահանում» մաքսային ռեժիմով հայտարարագրման ժամանակ:

*(17-րդ կետը խմբ. 14.04.05 N 582-Ն)*

18. *(18-րդ կետն ուժը կորցրել է 25.09.08 N 1073-Ն)*

19. Ակցիզային հարկով հարկվող ապրանքների մասնագիտացված մաքսատունը դրոշմավորման ենթակա ապրանքների յուրաքանչյուր տեսակի համար ըստ ներմուծողների վարում է ակցիզային դրոշմանիշերի շարժի (տրամադրման և հետընդունման) հաշվառման քարտեր, ըստ դրոշմանիշերի տեսակի, քանակի, սերիայի և համարի (N 5 հավելված):

*(19-րդ կետը խմբ. 14.04.05 N 582-Ն, փոփ. 25.09.08 N 1073-Ն)*

## III. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔ «ՆԵՐՄՈՒԾՈՒՄ՝ ԱԶԱՏ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ» ՄԱՔՍԱՅԻՆ ՌԵԺԻՄՈՎ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԴՐՈՇՄԱՎՈՐՈՒՄԸ

20. Հայաստանի Հանրապետության մաքսային տարածք «Ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ներմուծվող դրոշմավորման ենթակա ապրանքների դրոշմավորումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքից դուրս, բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի հոկտեմբերի 26-ի N 662 որոշման 4-րդ կետով նախատեսված և վերադրոշմավորման դեպքերի:

*(20-րդ կետը փոփ. 25.08.01 N 770, խմբ. 14.04.05 N 582-Ն)*

21. Դրոշմավորման ենթակա ապրանքների դրոշմավորումը կատարվում է ինքնասոսնձվող դրոշմանիշերով կամ ապրանքի վրա սոսնձման միջոցով փակցնելով դրոշմանիշը՝ սույն կարգի N 6 հավելվածում նշված տեղում և ձևով: Ապրանքների դրոշմավորման ժամանակ օգտագործվող սոսինձը պետք է բացառի ակցիզային դրոշմանիշերի կրկնակի օգտագործման հնարավորությունը՝ առանց վնասելու ակցիզային դրոշմանիշի ամբողջականությունը:

Դրոշմավորված ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքի վրա պետք է փակցված լինի չվնասված և ամբողջական դրոշմանիշ:

*(21-րդ կետը փոփ. 25.08.01 N 770, խմբ. 14.04.05 N 582-Ն, լրաց. 25.09.08 N 1073-Ն)*

22. Արգելվում է դրոշմավորումը կատարել սույն կարգի N 6 հավելվածում նշված ձևերին չհամապատասխանող տեսքով:

Արգելվում է հաստատված նմուշի դրոշմանիշերի վրա կատարել նշագրումներ (կնիքներով, դրոշմակնիքներով կամ այլ կերպ), դրոշմանիշերը կամ դրա մի մասը ծածկել անթափանց թաղանթներով:

*(22-րդ կետը խմբ. 14.04.05 N 582-Ն)*

## IV. ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՔՍԱՅԻՆ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ

23. Մաքսային մարմնում դրոշմավորման ենթակա ապրանքների՝ ուղեկցող մաքսային փաստաթղթերը (փոխադրման ամփոփագիրը) լրացնելիս «Մաքսային նշումները» մասում նշվում են ակցիզային դրոշմանիշերի տեսակը, թիվը, դրանց ստացման հաշիվ-ապրանքագրի համարն ու տալու օրը:

*(23-րդ կետը խմբ. 14.04.05 N 582-Ն)*

24. Ի լրումն ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի՝ մաքսատուն են ներկայացվում նաև ակցիզային դրոշմանիշերի ձեռքբերման մասին հայտարարատուի դիմումն ու դրանց ձեռքբերման հաշիվ-ապրանքագիրը:

*(24-րդ կետը խմբ. 14.04.05 N 582-Ն)*

25. Մաքսային մարմնի պաշտոնատար անձն ապրանքների մաքսային զննման ժամանակ ստուգում է նաև ակցիզային դրոշմանիշերի՝ սույն կարգի 21-րդ կետով նախատեսված դրոշմավորման կանոններին համապատասխանությունը:

*(25-րդ կետը խմբ. 14.04.05 N 582-Ն)*

26. Մաքսային ձևակերպումների ժամանակ մաքսային հայտարարագրում կատարվում են համապատասխան նշումներ ակցիզային դրոշմանիշերի տեսակի, քանակի ստացման հաշիվ-ապրանքագրի համարի և տալու օրվա մասին:

*(26-րդ կետը լրաց. 19.12.02 N 2079-Ն, խմբ. 14.04.05 N 582-Ն)*

## V. ՀԱՅՏԱՐԱՐԱՏՈՒԻ ԿՈՂՄԻՑ ՉՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԿԱՄ ՎՆԱՍՎԱԾ ԱԿՑԻԶԱՅԻՆ ԴՐՈՇՄԱՆԻՇԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ԿԱՐԳԸ

27. Չօգտագործված կամ վնասված դրոշմանիշերը ենթակա են վերադարձման մաքսային մարմիններ: Ընդ որում, դրանց հետընդունման ժամանակ վերադարձվում են ակցիզային դրոշմանիշերի ձեռքբերման համար վճարված գումարները, եթե «Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 11-րդ կետի երկրորդ պարբերությամբ սահմանված ակցիզային դրոշմանիշերի տրամադրման ժամկետներում ապրանքները կամ ակցիզային դրոշմանիշերը ներմուծվել են Հայաստանի Հանրապետություն, և չեն խախտվել սույն կարգի 29-րդ և 30-րդ կետերի պահանջները:

*(27-րդ կետը խմբ. 14.04.05 N 582-Ն, փոփ. 25.09.08 N 1073-Ն)*

28. «Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 11-րդ կետի երկրորդ պարբերությամբ սահմանված ժամկետներում դրոշմանիշերը Հայաստանի Հանրապետություն չներմուծելու կամ մասնակիորեն ներմուծելու դեպքում մաքսային մարմիններն իրականացնում են չներմուծված ակցիզային դրոշմանիշերի թվին համապատասխան ապրանքների ներմուծման համար օրենքով սահմանված ակցիզային հարկի գանձում և փոխանցում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

*(28-րդ կետը խմբ. 14.04.05 N 582-Ն, փոփ. 25.09.08 N 1073-Ն)*

29. Ներմուծողն ակցիզային դրոշմանիշերի օգտագործման մասին սույն կարգի 14-րդ կետում նշված հաշվետվությունը ներկայացնելու համար սահմանված ժամկետում վնասված կամ չօգտագործված ակցիզային դրոշմանիշերը պարտավոր է ներկայացնել մաքսային ձևակերպումներ իրականացնող մաքսային մարմին: Ընդ որում, վնասված ակցիզային դրոշմանիշերը պետք է փակցված լինեն առանձին էջերի վրա՝ ապահովելով հետևյալ պայմանները՝

ա) ակցիզային դրոշմանիշերը պետք է փակցվեն առանց ծալքերի և անհարթությունների.

բ) պետք է պարզ երևան ակցիզային դրոշմանիշի սերիան, համարը և դրա կենտրոնական մասը.

գ) ակցիզային դրոշմանիշի պատռվածքի դեպքում պատռված մասերը պետք է միացված լինեն.

դ) ներմուծողի կողմից վերադարձվող յուրաքանչյուր ակցիզային դրոշմանիշի մակերեսը (այդ թվում՝ հավաքված առանձին մասերից) պետք է կազմի իր սկզբնական չափի առնվազն 60 տոկոսը:

*(29-րդ կետը խմբ. 14.04.05 N 582-Ն)*

30. Ներմուծողը չօգտագործված կամ վնասված ակցիզային դրոշմանիշերի վերադարձման համար մաքսատուն է ներկայացնում՝

ա) դիմում՝ ակցիզային դրոշմանիշերի և դրանց համար վճարված գումարի վերադարձման համար՝ դրանում առանձին նշելով ակցիզային դրոշմանիշերի վերադարձման պատճառները.

բ) ակցիզային դրոշմանիշերի ձեռքբերման հաշիվ-ապրանքագրի պատճենը.

գ) ակցիզային դրոշմանիշերի ձեռքբերման համար ներկայացվող դիմումի պատճենը.

դ) չօգտագործված կամ վնասված ակցիզային դրոշմանիշերը:

Մաքսատունն ստուգում է ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը սույն կարգի պահանջներին, ընդունում ակցիզային դրոշմանիշերը և 2 աշխատանքային օրվա ընթացքում վերադաս մաքսային մարմին ներկայացնում առաջարկություն չօգտագործված ու վնասված ակցիզային դրոշմանիշերի գումարը վերադարձնելու վերաբերյալ: Վերադաս մաքսային մարմինը 3 աշխատանքային օրվա ընթացքում քննարկում և ընդունում է որոշում հետ ընդունված ակցիզային դրոշմանիշերի ձեռքբերման համար վճարված գումարը վերադարձնելու մասին, եթե դրանք համապատասխանում են սույն կարգի պահանջներին: Ընդ որում, չօգտագործված ակցիզային դրոշմանիշերի համար վճարված գումարը վերադարձվում է, իսկ վնասված ակցիզային դրոշմանիշերի համար վճարված գումարը վերադարձվում է՝ նվազեցնելով նույն ակցիզային դրոշմանիշերի տպագրության համար պետության կատարած ծախսերի չափով:

Սույն կետում նշված՝ հետ ընդունված ակցիզային դրոշմանիշերի ձեռքբերման համար վճարված գումարը չի վերադարձվում, երբ դրանք չեն ներկայացվել սույն կարգի պահանջներին համապատասխան: Դրա մասին վերադաս մաքսային մարմինը տալիս է եզրակացություն՝ նշելով մերժման պատճառները:

*(30-րդ կետը խմբ. 14.04.05 N 582-Ն)*

31. Չօգտագործված կամ վնասված ակցիզային դրոշմանիշերը չվերադարձնելու դեպքում մաքսատունն իրականացնում է օտարերկրյա պայմանադիր կողմի հետ կնքված պայմանագրում նշված՝ ներմուծման ենթակա չվերադարձված կամ հետ չընդունված ակցիզային դրոշմանիշերի քանակին համապատասխան ապրանքների ներմուծման համար օրենքով սահմանված ակցիզային հարկի գանձում և փոխանցում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

*(31-րդ կետը խմբ. 14.04.05 N 582-Ն)*

32. Հետագայում «Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 11-րդ կետի երկրորդ պարբերությամբ սահմանված ակցիզային դրոշմանիշերի տրամադրման ժամկետը լրանալու օրվան հաջորդող 90 օրվա ընթացքում պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների ներմուծման դեպքում գանձվում է օրենքով սահմանված կարգով ներմուծված ապրանքների համար հաշվարկված պարտադիր վճարների (հարկերի, պարտադիր այլ վճարների) գումարների և սույն կարգի 31-րդ կետում նշված կարգով վճարված ակցիզային հարկի գումարի տարբերությունը: Այդ տարբերությունը բացասական լինելու դեպքում այն ենթակա է վերադարձման կամ հաշվանցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Նշված ժամկետում ապրանքների չներմուծման, ինչպես նաև չօգտագործված կամ վնասված ակցիզային դրոշմանիշերի ներմուծման դեպքում հաշվարկված և վճարված պարտադիր վճարների, հարկերի և այլ վճարների գումարները ենթակա չեն հաշվանցման կամ վերադարձման:

*(32-րդ կետը խմբ. 14.04.05 N 582-Ն, փոփ. 25.09.08 N 1073-Ն)*

## VI. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

33. «Ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմից տարբերվող՝ Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպված մաքսային ռեժիմներով Հայաստանի Հանրապետության մաքսային տարածք ներմուծվող պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքները ենթակա չեն դրոշմավորման:

*(33-րդ կետը լրաց. 08.04.04 N 540-Ն, խմբ. 14.04.05 N 582-Ն)*

34. Չդրոշմավորված դրոշմավորման ենթակա ապրանքները «Տարանցիկ փոխադրում» ռեժիմով տեղափոխվելու դեպքում ենթակա են պարտադիր մաքսային ուղեկցման:

*(34-րդ կետը փոփ. 25.08.01 N 770, 08.04.04 N 540-Ն, խմբ. 14.04.05 N 582-Ն)*

35. Չդրոշմավորված դրոշմավորման ենթակա ապրանքների ժամանակավոր ներմուծում կարող է իրականացվել միայն այն դեպքում, երբ ապրանքները ներմուծվում են նմուշային քանակով` ցուցահանդեսներում, տոնավաճառներում, միջազգային հանդիպումների կամ համանման այլ միջոցառումների ժամանակ ցուցադրելու համար` վերադաս մաքսային մարմնի հետ համաձայնեցված քանակով:

*(35-րդ կետը փոփ. 25.08.01 N 770, խմբ. 14.04.05 N 582-Ն)*

36. Նախկինում «Ներմուծում` ազատ շրջանառության համար» ներմուծված դրոշմավորված ապրանքների արտահանման (վերաարտահանման) դեպքում ակցիզային դրոշմանիշերը վնասվում են, որպեսզի անհնար դառնա այդ ապրանքների օգտագործումը (իրացումը) Հայաստանի Հանրապետության տարածքում:

*(36-րդ կետը խմբ. 08.04.04 N 540-Ն, 14.04.05 N 582-Ն)*

37. Մաքսային հսկողության ներքո գտնվող դրոշմավորված` պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքները Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքից հետարտահանման դեպքում ակցիզային դրոշմանիշերը մաքսային հսկողության ներքո` մաքսային մարմնի պաշտոնատար անձի ներկայությամբ վնասվում են: Ակցիզային դրոշմանիշերի վնասման մասին կազմվում է արձանագրություն` վերադաս մաքսային մարմնի սահմանած կարգով, որը ներմուծողը ներկայացնում է ակցիզային դրոշմանիշերի օգտագործման մասին հաշվետվությունը ներկայացնելու ժամանակ: Նշված կարգով վնասված դրոշմանիշերը համարվում են վերադարձված վնասված ակցիզային դրոշմանիշեր: Դրոշմանիշերի վնասումից հետո հետ արտահանվող ապրանքները ենթակա են պարտադիր մաքսային ուղեկցման` մինչև արտահանման մաքսային կետ:

*(37-րդ կետը խմբ. 14.04.05 N 582-Ն)*

## VII. ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

38. Դրոշմավորման կարգի նկատմամբ հսկողությունն իրականացնում են մաքսային մարմինները, իսկ Հայաստանի Հանրապետություն ներմուծված դրոշմավորման ենթակա ապրանքների իրացման նկատմամբ հսկողությունն իրականացնում են նաև հարկային մարմինները:

*(38-րդ կետը խմբ. 14.04.05 N 582-Ն)*

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար Մ. Թոփուզյան

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետություն ներմուծվող
ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ
ապրանքների ակցիզային նոր նմուշի
դրոշմանիշերով պարտադիր
դրոշմավորման կարգի

## Ց Ա Ն Կ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԵՎ ՊԱՐՏԱԴԻՐ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ

| Արտադրանքի ծածկագիրը` ըստ ԱՏԳ ապրանքային անվանացանկի | Ապրանքախմբի անվանումը |
|---|---|
| 22.04, 22.05, 22.06 | խաղողի և այլ գինիներ, գինենյութ |
| 22.07 | սպիրտ, բացառությամբ 5 լիտր տարողությունը գերազանցող տարաներով ներմուծվող սպիրտի |
| 22.08 | սպիրտային խմիչք |
| 24.02 | ծխախոտի արտադրանք |

*(Հավելվածը խմբ. 14.04.05 N 582-Ն)*

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ակցիզային
հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների ակցիզային
նոր նմուշի դրոշմանիշերով պարտադիր դրոշմավորման կարգի

_______________________________________________________________
(վերադաս մաքսային մարմնի անվանումը)

Գրանցման N _____ ____ ___________ 200 թ.

## Դ Ի Մ ՈՒ Մ

## ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔԻ ՀԱՄԱՐ ԱԿՑԻԶԱՅԻՆ ԴՐՈՇՄԱՆԻՇԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՄԱՍԻՆ

____________________________________________________________
(կազմակերպության լրիվ անվանումը, գտնվելու վայրը,

____________________________________________________________
հաշվառված մաքսատան անվանումը, թղթապանակի համարը,

____________________________________________________________
բանկային տվյալները, ՀՎՀՀ, պետական ռեգիստրում գրանցման համարը)

խնդրում է տրամադրել ակցիզային դրոշմանիշեր` ____________________ հատ

__________________________ գումարի չափով:

Ընդհանուր գումարը ______________________________________________
(տառերով)

Տվյալ ակցիզային դրոշմանիշերն անհրաժեշտ են _____________________

____________________________________________________________
(պայմանագրի համարը, օրը, ամսաթիվը, ապրանքի անվանումը, քանակը)

_______________________________________________ ձեռքբերման համար:

Ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների դրոշմավորման կարգին ծանոթ ենք:

Կազմակերպության տնօրեն _______________ _______________
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Գլխավոր հաշվապահ _______________ _______________
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Կ.Տ.

_____ _______________ 200 թ.

*(Հավելվածը խմբ. 14.04.05 N 582-Ն)*

Հավելված N 2-1
Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ակցիզային
հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների ակցիզային
նոր նմուշի դրոշմանիշերով պարտադիր դրոշմավորման կարգի

_______________________________________________________________
(վերադաս մաքսային մարմնի անվանումը)

Գրանցման N ______ ____ ___________ 200 թ.

## ԴԻՄՈՒՄ

## ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՀԱՄԱՐ ԱԿՑԻԶԱՅԻՆ ԴՐՈՇՄԱՆԻՇԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՄԱՍԻՆ

____________________________________________________________ (կազմակերպության լրիվ անվանումը, գտնվելու վայրը, ____________________________________________________________ հաշվառված մաքսատան անվանումը, թղթապանակի համարը, ____________________________________________________________ բանկային տվյալները, ՀՎՀՀ, պետական ռեգիստրում գրանցման համարը)

խնդրում է տրամադրել ծխախոտի արտադրանքի համար ակցիզային դրոշմանիշեր՝

_____________________ հատ _____________________ գումարի չափով:

Ընդհանուր գումարը _______________________________________________
(տառերով)

